## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 2

## 17.01.2019Թ. ԿՆՔՎԱԾ N <<ՉՀ-ՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/2>> ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Չարենցավան <<20>> 05 2019թ.

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի <<Մշակույթ>> ՀՈԱԿ-ը**, ի դեմս տնօրեն **Ա. Աբգարյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և **<<ԱՐՄԻՆԵ>> ԱԿ-ն,** ի դեմս Կոոպերատիվի նախագահի ժ/պ **Վ. Բավեյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով ՀՀ Հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի 21-րդ տողի փոփոխությունը, 17.01.2019թ. կնքված N <<ՉՀ-ՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/2>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ կետը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը որոշեցին՝

1.1 17.01.2019թ. կնքված N <<ՉՀ-ՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/2>> գնման պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված և կիրառված <<խոր.մ>> չափման միավորը փոխարինել <<կգ>> չափման միավորով՝ հիմք ընդունելով սեղմված բնական գազի 1 խորանարդ մետրի և 1 կիլոգրամի փոխհարաբերակցության՝ տեսությամբ ու գիտականորեն ընդունվող մեծությունը (1խմ=0.7001կգ), որը ներառված է գազի ծավալի ստուգաչափված էլեկտրոնային ճշտիչում: Խտության փոփոխության դեպքում կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածը կազմված են 1 (մեկ) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| **<<ԳՆՈՐԴ>>** | **<<ՎԱՃԱՌՈՂ>>** |
|---|---|
| **ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի <<Մշակույթ>> ՀՈԱԿ** | **<<ԱՐՄԻՆԵ>> ԱԿ** |
| **ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1** | **ք. Չարենցավան, Պարոնյան 2** |
| **<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ** | **<<Արդշինբանկ>> ՓԲԸ** |
| **Հ/Հ 16028448201700** | **Հ/Հ 247300003693** |
| **ՀՎՀՀ 03015071** | **ՀՎՀՀ 02803416** |
| | **էլ. հասցեն՝ armmkoop@mail.ru** |
| | **հեռ. (093) 00-16-76** |
| **Տնօրեն՝ Ա. Աբգարյան** | **Նախագահի ժ/պ՝ Վ. Բավեյան** |
| (ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |